նմա հնազանդեսցի հրամանի տան տեառն, բայց հրամանէ որ ի՝ցէ ընդ դէմ յօրինացն տանն հայոց, և ոչ ոք այլ 'ի որոք տան մի՛ հնազանդեսցի հրամանի ումեք եթէ լինիցի ընդ դէմ յօրինացն տանն հայոց։

ԳԼՈՒԽ ՅԾԹ.

Տանն յԱստուծոյ կացողք ըստ սահմանի էկլեզիաստիկաց, այլ ով ոք մտանող 'ի տուն Տեառըն առ 'ի պաշտել զԱստուած կալով հեզ և խոնարհ իւրաքանչիւր աստիճանի 'ի տեղի իւր կացցի այսինքն.

Նախարարի . .	1	առաջի աստիճանի։
Իշխանաց . .	2	
Զօրագլխաց. .	3	
Զինուորաց . .	4	
Վաճառականաց	5	
Հողագործից .	6	
Արհեստաւորաց	7	

ԳԼՈՒԽ ՅԿ.

Ով ոք աղմկեսցի և բարձրաձայն կռուեսցի 'ի մէջ սուրբ Եկեղեցւոյ աւագերէցն և երիցփոխանն ունին իշխանութիւն հանել նմայ 'ի յերեսէ սրբոյ սեղանոյ առ արտաքս, ոչ ոք ընդդիմասցի սոցա, և յետ արձակելոյ ժամին այրն